

ՀԱՅ ՑԵՂԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ

(Շար. տես Բազմավիշ 1931, էջ 254)

ԽՈՒՐՐԻՆԵՐ ԹԷ “ARMENOID,” ՆԵՐ

(ՑԵՂԱԽՍՈՍՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ)

Գ.

Ժամանակակից գիտությունը արդիւնքն է դարերի անվերջ փորձարկութիւններին և անոնցմէ յարափոփոխութիւն ծնած փորձառական տուեալներին: Մասնաւորապէս վերջին 100 տարուան ներածական (induktiv) հետազոտութիւններ մարդաբանութեան վերաբերեալ բոլոր ճիւղերի մէջ, թէ մարդուն ցեղախօսական պատկանելիութեան և թէ լեզուական կառուցուածքի ու ճիւղաւորումների մասին՝ գրեթէ անճանաչելի դարձուցած են Բլումինբախի սկզբնական հայեացքը, որով նա մարդկութիւնը կը բաժանէր հինգ գլխաւոր ցեղախումբերի: Ամենէն առաջ պէտք է ասել որ գլխաւոր գիտնականներն անգամ դեռ բոլորովին չեն համաձայնիր «ցեղ» բառի այսպէս կոչուած ցեղա-կենսաբանական սահմանաւորման մասին: Ինչպիսի՛ չափանիշերով պէտք է սահմանել մի ցեղ. — անոր ֆիզիքական — մարմնական զիւղանութեամբ, մազերի, աչքերի, մորթի գոյնով թէ բարոյական — բարոյագիտական (ethic) յատկանիշերով, լեզուական ծագումով թէ պատմական ճակատագրով: Ասկից մօտ 70 տարի առաջ տը Գոթինոյ կը հիանար գերմանական ցեղին որպէս կատարելութեան տիպ, որովհետեւ այդ ցեղը բովանդակ մարդկութեան սորվեցուցած է ազատութեան զաղափարը: Նոր ժամանակների մէջ Պօն Լուշան կը գտնէ որ գրեթէ միայն հայ ցեղն է որ «հակառակ էր բազմազանի և յարափոփոխ օտար տիրապետութեանց զարմա-

նալիւթէն պահպանած է իր նմանածին (homogen) ֆիզիքական յատկանիշները. հազարաւոր տարիներէ ի վեր անոնք (հայերը) հազիւ թէ փոխուած են»¹: Դարձեալ Պօն Լուշանի պէս հեղինակաւոր մի մարդաբան կը նկատէ որ լեւոնական ֆիւրտերը ամենազուտ տիպերն են հին Հնդ-Եւրոպացիներին: Բոլոր հեղինակութիւնները համամիտ են որ մարդ-արարածին վերաբերեալ բոլոր գիտութիւնները, մասնաւորապէս բաղդատական մարդաբանութիւն, ցեղախօսութիւն և լեզուաբանութիւն, հակառակ անոնց փորձառական և մասամբ հայեցողական բնաւորութեան, մեծապէս սատարած են լուսաբանելու նախապատմութեան անգիր շրջանը և բեւեռագրական ազօտ հազարամեակները (4000 — 1000 թ. Ա.): Սակայն ինչպէս պէտք էր ակնկալել վերոյիշեալ գիտութիւնների կիրառութեան եղանակները և նպատակայարմարութեան չափը կը տարբերին գիտնականէ գիտնական: Ոմանք, ինչպէս օրինակ Եֆնսըն, Պօն Լուշան և այժմ էլ Գադրի յենուելով խաթիթական քանդակների յայտաբերած զիւղանութեան և ներկայ հայկական տիրապետող ֆիզիքական տիպի նմանութեան վրայ, հայերիս ուղղակի սերունդը կը նկատեն հին խաթիթներին: Ականաւոր

1. Felix Von Luschan; Völker, Rassen, Sprachen. 1922. էջ 142. Բերլին.

գիտնականներ, ինչպէս կրէշմեր¹ և այլք Hatti բառէն ածանցուած կը նկատեն մեր հայ ցեղանունը: Այժմ փորձենք ընդգծել Հայաստանի հին ցեղախօսութեան մօտաւոր պատկերը՝ ըստ Արեւմուտքի գիտնականներին: Մենք պարտական ենք գիտական այս հարցերի մէջ Արեւմուտքին շիւղելու, որովհետեւ առ այժմ չունինք ուրիշ ճար: Մեր ցեղը, իր անունը և ֆիզիքական զիւղանութիւնը հարկադրած է մի ամբողջ աշխարհամասի, իսկ մենք այդ եղելութիւնը կը լսենք գերմանացի գիտնականներէ: Անցեալ դարու 40-ական թուականներէն սկսեալ Ֆրանց Բօպի դեկլարութեամբ Եւրոպայի և Արիական Ասիոյ ցեղախօսութիւնը և լեզուաբանութիւնը զանազան զիւղանիւթներ և ելեւէջներ կրելէ յետոյ, դարուն վերջերը այդ գիտութիւնները տուին հետեւեալ բիւրեղացած պատկերը.

Ա. — «Եւրոպական մարդ կամ ցեղ» (Homo Europaeus). հիւսիս և հիւսիս-արեւմտ. Եւրոպայի և անոնցմէ բխած խարտեաշ և երկարագլուխ ցեղ, ինչպէս Սկանտինաւեանք, Գերմանացիներ, Անգլիացիներ:

Բ. — Միջերկրականեան ցեղ (Homo Mediterraneus). հարաւային և հարաւ-արեւմտ. Եւրոպայի թխագոյն, երկարագլուխ ցեղերը:

Գ. — Ալպեան ցեղ (Homo Alpinus). Դինարիք Ալպեանց և հարաւ-արեւել. Եւրոպայի թխագոյն կլորագլուխ ցեղերը, որոնց կապակցութիւնները դեռ այնչափ լաւ ուսումնասիրուած չեն որչափ առաջին երկուքին²:

Եւրոպայի ցեղախօսութիւնը բացատրող եռադասեան այս հայեցողութիւնը կրեց մի նշանակելի փոփոխութիւն ներկայ դարու սկզբին: Միջերկրականեան ցեղի Ափրիկէէն սերած լինելու մասին նիւթեր հաւաքած և ընդհանուր հայեացքներ պարզած էին Bladé և ուրիշներ դեռ 60-ական թուականներէն սկսեալ: Սակայն տարիների պրպտումներէ յետոյ դուրս եկաւ Սերճի՝ մարդաբանական հիմքերով հաստատելու որ հարաւային Եւրոպայի թխամորթ երկարագլուխ ցեղերը ունէին Ափրիկեան ծագում և թէ այդ մարդի կլորագլխակերպները (Brachiod) եկած էին Փոքր Ասիայէն³: Փոքր Ասիական ցեղազրական այս սեպի խրումն դէպ ի կեդրոնական և արեւելեան Ալպեանց շատոնց ունեցած էր իր զաղափարախօսները, Բասկեր, Ետրուսկացիներ շատերէ նկատուած էին որպէս կովկասցիներ կամ Փոքր Ասիացիներ: Սակայն գիտականօրէն բանաձեւուած մի ծրագրով դուրս եկաւ Պեւլիքս Պօն Լուշան ներմուծելու իր «Armenoid» սեպը տարամերձօրէն եւրոպական ընկերութեան յատկագծին մէջ:

Դեռ 80-ական թուականներին և որպէս Բրոֆէսէօր Վիեննայի համալսարանի ցեղախօսութեան, երիտասարդ Պօն Լուշան զանկաչափական հետազոտութիւններ կը կատարէր ի հիւսիսային Սիւրիա, Միջին Եփրատի և հարաւային Տաւրոսի հին մարդերի մէջ⁴: Նա կը չափէր ոչ միայն արարների, հայերի, Եուրուքների եւն. ցեղերի զանկային ցուցանիշերը, այլ և կ'ուսումնասիրէր անոնց «հոգեկան ու բարոյական» յատկութիւնները: Դժբախ-

1. Paul Kretschmer: Die Proto-indogermanische Schichte. I. Glotta XV. (1925) 3-4. Heft. էջ 317. — Լաւ գիտեմ որ Բրոֆ. Մ. Միւսսեան և ուրիշ հայրենակից գիտնականներ զրած են նոյն նիւթի մասին: Դժբախտաբար ինձ մատչելի չեն այդ գրութիւնները բովանդակող հայ պարբերականները, ու ե կարծիք յայտնել կարենալու համար: Ա. Ս.
2. Այստեղ մասնաւորապէս օգտուած եմ երկու հեղինակութիւններէ.
(Ա.) Dr. K. S. Wolff: Rassenlehre; Gedan-

ken für Anthropologie etc. Mannus Bibliothek-ի No. 39. 1927. Լայպցիկ.
(Բ.) Alfred Ploetz: Anthropologie. I. 2-րդ Teubners «Kultur den Gegenwart». 1923.
3. Giuseppe Sergi: Europa. 1905. Torino Ամենէն ընդունուած իրեն իտալական մի հեղինակութիւն.
4. F. Von Luschan: «Völker ...». ըստ վեր-նոյն. էջ 13ff.

տաբար Պօն Լուշան գոնէ հայերէն ընտրած է ամենէն ոչ-յատկանշական այլանդակ տիպերը:

Այնթապցի մի անանուն հայ, որ ոչ մի կերպով չի բնորոշեր նոյնիսկ Այնթապցի մեր ազգայինների մեծամասնութիւնը. սարսափելիօրէն հաստատվիլ, արտասովոր կերպով արծուեղունգ, ճակատը բոլորովին նահանջող դէպ ի գանկը և ծոծրակը հագիւ նշմարելի, իրանով կարճ և լիք, թիկնեղ ու ամրակազմ. ինչպէս ծանօթ է հայ մասնագէտներին, Պօն Լուշանի ընտրած այդ «Արմենոյիտ» տիպը տպագրուած է Արեւմտեայ բոլոր ազգերի ազգագրական հանդէսների և հատորների մէջ որպէս ժամանակակից հայի տիպը: Ինձ կը թուի որ Պօն Լուշանը զգաց իր սխալը և 1907ի այցելութեան ընտրեց հայկ. երկու աւելի ներկայացուցչական տիպեր. «Որոնդէս գետին վրայ Անտիօքի մօտ» երկու հայեր, Կիւրակոս և Ստեփան¹. որոնցմէ առաջինը շատ քիչ կը տարբերի վերոյիշեալ արտասովոր տիպէն, իսկ երկրորդը կատարեալ տիպն է առնական դիմագծութիւն ունեցող մեր ժողովրդին:

«Արմենոյիտ» ցեղի և այսպէս կոչուած զուտ «հնդեւրոպական» տիպի գանկային ցուցանիշները կը տարբերին զգալի չափով: Թուրքական թիւերի և համեմատութիւնների մէջ մտնելը շատ հեռու պիտի տանէր ինձ: Յանկացողները դիւրաւ կարող են գտնել թէ Պօն Լուշանի զբոսածընների և թէ Բիւրէյի² հեղինակաւոր հատորին մէջ: Իբրեւ հերքումս Պօն Լուշանի չափումներին պէտք է ասեմ որ Լոնտոնի համալսարանի ցեղախօսութեան իմ ուսուցիչը Բրօֆ. Սէլիկմըն, մի ծանօթ հեղինակութիւն, անձամբ չափեց ամենագլխի ուսանողների գանկերը, սկսեալ ճարտարների մինչև Ֆինլանտացիներ,

Արաբներ, Հունգարացիներ և Գերմանացիներ, իմ գանկային ցուցանիշը դուրս բերաւ 82 մատնաչափ, ինչ որ միջինն է հնդեւրոպական ցուցանիշին. թո՛ղ թո՛ղ տրուի ինձ ասել որ ես մեր ցեղի միջին տիպին կը պատկանիմ:

Յամենայն դէպս 1908-էն սկսեալ Պօն Լուշան յաջողեցաւ մարդաբանութեան միջազգային բառագանձին մէջ ներմուծել «Armenoid» բառը բնորոշելու Փոքրասիական ամենահին ցեղախօսական տիպը: 1912-ին Վիեննայի Մարդաբանական ժողովին նա վերջնապէս բանաձեւեց իր «Արմենոյիտ» հայեացքը³ որ լոյս տեսաւ նաեւ անգլ. և ամերիկեան մասնագիտական հրատարակութիւնների մէջ⁴: Ըստ Պօն Լուշանի «Արմենոյիտ» ցեղին կը պատկանին Կովկասէն մինչև Եգէական և Պարստին բնակող ժողովուրդների հընգոյն խաւը (իր բառով Vorderasiaten) և Գինարիք ցեղեր արեւելեան Ալպեանց և հարաւ-արեւելեան Եւրոպայի մէջ, Թիւրքիներ, Սերբեր և այլն: Հայ ցեղի լայնածաւալ տիրապետութեան մասին ամբողջ Կովկասի մէջ Պօն Լուշան ունի մի հայեացք⁵, որի պատմական լինելը կը թուի տարակուսելի և այդ պատճառաւ զանց կ'առնեմ յառաջ բերելէ:

Այժմ ո՛չ մի լուրջ գիտնական չի կասկածիր «Արմենոյիտ» հնագոյն խաւի մարդաբանական կառուցումը, և յամենայն դէպս, իբրեւ «Արմենոյիտ» որակուած և ֆիզիքական որոշ դիմագծութիւն ունեցող այդ տիպի Փոքր Ասիոյ հնագոյն խաւը լինելու մասին:

Դիւրաւ կարելի է ըմբռնել որ այդ բառը զուտ մարդաբանական մի ասութիւն է առանց պատմական բովանդակութեան: Նոր-Քարային դարի բնիկները ապահովաբար ինքզինքնին «Արմէն» չէին անուա-

նել. յամենայն դէպս մեզ ծանօթ է որ այդ բառը առաջին անգամ երեւան կու գայ Ե. Պարու Ք. Ա. ինչպէս յիշեցի ասկէ առաջ: Վեց տարիէ ի վեր ուշադրութեամբ հետեւած եմ բոլոր վիճաբանութիւններին և հրատարակութիւններին գտնելու մի լուծում մարդաբանօրէն «Արմենոյիտ» մկըրտուած հին ցեղին հնախօսական կապակցութիւններին, և իբրեւ բաւառար մի վարկած — զուգե առ այժմ յանդգնեմ — կ'առաջադրեմ նոյնացնել «Արմենոյիտ» ցեղախաւը Խարրի արձանագրութեանց յիշած Խուրրի ժողովրդին հետ: Ո՛չ մի Արեւմտեայ գիտնական չէ ըրած նոյնացման ու է փորձ, ո՛չ ալ հեռաւոր կամ մերձաւոր մի ակնարկութիւն մի այդպիսի հնարաւորութեան մասին: Միմիայն Բրոֆ. Ալըն Գադրի¹ ըրած է մի թուումս մասանց Խուրրի ժողովրդի գոյութեան վրաստանի Կարսի թաղէն սկսեալ մինչև Պարստին և Սումերիա և նոյնիսկ Հիւսիս արշաւանքների տիրապետութեամբ յիշակատա:

Ամերիկացի գիտնականը իր մեղուաշան հատորին վերջին 20 էջերը նուիրած է մի շարք հին քանդակների և արձանների վերաբնագրութեան: Նա յառաջ բերած է հին Եգիպտական, Սումերական, Խաթթիական, Ասորական և Խուրրի գէմբեր, ապացուցանելու Առաջաւոր Ասիոյ հնագոյն ցեղի միօրինակ դիմագծութիւնը:

* *

Խաթթի պետութեան մայրաքաղաք՝ Խաթթուշաշ — Բողազ — Քէօյի արքայական դիւանը կը բովանդակէ ութ տարբեր լեզուներով գրուած բեւեռագիր արձանագրութիւններ: Անոնց մանրամասն ուսումնասիրութենէն կարելի է քաղել յստակ

տեղեկութիւններ, որոնք տակաւ պիտի հաստատեն վերեւ առաջադրած իմ հայեացքը: Կը գործածեմ «պիտի հաստատեն» ապառնի եղանակը, որովհետեւ այդ լեզուներէն մէկը քանին, ինչպէս պիտի տեսնենք, դեռ անհասկնալի կը մնան նոյնիսկ Հրոզնիի և Ֆորբէրի պէս առաջնակարգ ընթերցողներին: Այդու ամենայնիւ ցարդ թարգմանուած բեւեռագրական աղբիւրները կ'ընծայեն բաւարար լոյս Խուրրիների մասին բանաձեւելու վերոյիշեալ իմ հայեացքը:

Արդ յառաջ պիտի բերեմ իրողութիւններ:

Չնայած այն բանին որ Հիւսիս-Վիեննայի Բողազ — Քէօյի խաթթիական արքայական դիւանը (11,000 կտոր բեւեռագիր տախտակ կամ աղբիւս, բաց ի օտար բառով գրուած կիսատ ու ջարդուած մասնիկներէ) գտաւ 1906-1907 ին: Է. Մայրրի² պէս մի ականաւոր պատմագէտ, դեռ 1915ին միայն կ'ենթադրէր որ Խաթթիների բարբառը մի հնդ — եւրոպական լեզու պէտք է լինէր: «Երբ 1915-ի աշնան, կը գրէ Կրէյմեր³, Հրոզնի ինձ հաղորդեց որ իբրեւ հետեւանք իր խաթթիական հետազօտութեանց գտած է որ Խաթթիներէն մի հնդ — եւրոպական լեզու էր, ես անմիջապէս կրեցի այն տպաւորութիւնը որ այդ գիւտը պէտք էր ընդունիլ իբրեւ լուրջ: Սակայն անոր հիմնական գործերի սրբագրութիւնները կարգալէ յետոյ եկայ այն եզրակացութեան որ Խաթթիական բառամթերքը իր լայն շրջագծին մէջ ոչ — հընդ — եւրոպական էր: Հրոզնի ինք եւս ճանաչեց այդ հնարաւորութիւնը⁴: Անկից ի վեր ունինք նոր իրողութիւններ ապացուցանող թէ Խաթթիական բառամթերքը մեծապէս խառնուած է ո՛չ — հնդեւրոպական մի ուժեղ տարրով⁵: Նմանօրինակ եզրակա-

1. F. Von Luschan. «Völker...» Անգլ. էջ 142-143.

2. W. Z. Ripley. The races of Europe. 1900.

3. Korrespondenzblatt der Deutsche Gesel-

schaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte. Jahrgang 1912. էջ 94-96.

4. F. Von Luschan. «Völker...» Անգլ. էջ 62.

5. Journal of the Royal Anthropological Institution. 1912. Լոնտոն.

1. Allen H. Godbey: The lost tribes a myth. էջ 77-79.

2. Eduard Meyer: Reich und Kultur der Chetiterer. Պիւրն, 1915.

3. Paul Kretschmer: Die Proto-indogermanische Schichte. Ի Glotta. 1925. անգլ էջ 300.

4. Bed. Hrozný: Hethitische Keilschrifttexte. Ի շարք Boghaz-Köi Studien I. 1917. էջ 7.

5. B. Sommer: Hethitisches I. Ի շարք Boghaz-Köi Studien-ի. 3. 1920, էջ 1.

ցումբան եկաւ նաեւ Պորրէր¹ որ իր խը-
նամալ ստուար ուսումնասիրութեամբ
հիմնապէս վերլուծեց խաթթի պետութեան
լեզուաբանութիւնը:

Ինչպէս յիշեցի վերի ծանօթագրութեան
մէջ Պորրէրի այդ հեղինակաւոր ուսումնա-
սիրութիւնը կը գրաւէ ZDMG.-ի 95 էջեր:
Այստեղ կարելի է ներկայացնել միմիայն
անոր փորձերի ուրուագիծը:

Նկարագրելէ յետոյ Բողազ-Քէօյի դի-
ւանին մէջ երեւան եկած աղիւսների վի-
ճակը և զործածուած լեզուների սեպածեւ
նշանագրերի կիրառութեան եղանակն ու
զրեւու ձեւը, Պորրէր կը համրէ ութ լե-
զուներ. — Ա) Սումերական, Բ) Բաբելա-
կան կամ Ակկադական, Գ) Կանէշեան,
Դ) Լուվիական, Ե) Բալայական, Զ) Խա-
րիական (das Harrische), Է) Նախա-
խաթթիական (das (proto) Hattische),
Ը) Մանդայական:

Սումերականը արդէն շատոնց մեռած
լեզու էր այդ աղիւսները գրուած ժամա-
նակ (ժե-ժԻ դար Բ. Ա.), ու միայն կ'ու-
սուցուէր խաթթի պետութեան դպրոց-
ների մէջ, ինչպէս այսօր կ'ուսուցուի
լատիններէն: Սումերացիք եղած են, գոնէ
որչափ ծանօթ է այժմ, բեւեռագիր գոր-
ծածող առաջին ժողովուրդը, և ուրեմն
առանց Սումերէնի որոշ ծանօթութեան
կարելի չէր մշակել գաղափարագրերի մի
սխառեւ, և հասկանալ որոշիչ յօդեր և
վանկանշաններ: Նաեւ հին և ուրեմն ազ-

դեցիկ էին Սումերական աղօթքներ և
կրօնական երգեր: Խաթթիական դիւանին
մէջ անոնցմէ կայ քիչ, յաճախ կցկտուր
և ցիրուցան:

Բաբելականը կամ Ակկադականը այն
ժամանակ դիւանագիտական լեզուն էր.
միջազգային առեւտուր կամ թղթակցու-
թիւնները կը կատարուէին այդ լեզուով:

Ընդդէմ այդ երկու լեզուներին կը
կանգնէին մնացեալ վեց լեզուները, զորս
պետութեան զանազան ժողովուրդների
կողմէ կը խօսուէին լայնագոյն մտքով:

«Ըստ իմ կարծիքին, կը գրէ Պորրէր²,
բնագրերի մեծ մասը գրուած է Կանէ-
շեան³ լեզուով, իսկ Խաթթիական և Նա-
խա-Խաթթիական լեզուներով արձանարուած
են գրեթէ միակ աղօթքներ, երդումներ, ուխ-
տեր և աստուածներին ողորկարար աղա-
յանքներ և ոգեկոչումները»:

Ե. Պորրէրիս եւս իր թարգմանութիւն-
ների մէջ կը շեշտէ Խուրրիական և Նա-
խա-Խաթթիական լեզուների այդ առան-
ձնայատուկ կրօնական հանգամանքը: Իսկ
Լուվիական լեզուով գրուած են բացա-
ռապէս երգումներ:

Բեւեռագիր հեղինակը կը նկարագրէ թէ
սոնական այս կամ այն առիթով ինչ զոր
պէտք է մատուցանել աստուածներին, ինչ
արարողութիւն կատարել, ինչ աղօթքներ
կարդալ և ինչ տեսակ կոշ ընել, Հրօզնի⁵
արդէն հաստատած է որ նախապէս իր
«Խաթթիական» կոչած գլխաւոր լեզուն

է Բաբելական առեւտրական մի գաղութ, Զանազան ազ-
գերի բեւեռագրերի մէջ կան ակնարկութիւններ Կանէշի
առեւտրական կարեւորութեան մասին: Հաւանաբար Կա-
նէշ բուն ինքն մեզ ծանօթ Կասարիան է, Նա ունի առ
նուազն 5000 տարուան զրաւոր առեւտրական աւանդու-
թիւններ, Այդ հինաւուրց աւանդութիւններով միայն
կարելի է բացատրել Կասարացի մեր հայրենակիցների
արտասովոր յաջողութիւնները զործի բոլոր ասպարէզ-
ների մէջ.

(Ա. Ա.)

4. Հմտ. A. H. Sayce: The Proto-Hittite-ի
Journal of Royal Asiatic Society. 1924. էջ 245-
255:

5. Bedrich Hrozný: Mitt. d. D. O. Ges. 56
տարի:

1. Emil Forrer: U. Mitteilungen der Deu-
tsche Orient Gesellschaft. 1921. No. 61. էջ 26 ff.

» » Բ. Zeitschrift des Deu-
tschen Morgänl. Geselsch. 1922, Nf. 1 (76). վեր-
նագիրն է Die Inschriften und Sprachen des
Hatti-Reiches. էջ 174-269.

2. Die Inschriften und Sprachen des Hatti-
Reiches. էջ 185.

3. Kaneš մի շատ հին զարգացած առեւտրական
կեդրոն Կասարիոյ մօտ, նոյնացուած Կիւլ-Թեփէ գիւ-
ղին հետ: Կանէշ բառը ցարկ կը մնայ անբացատրելի.
անծանօթ է անոր ստուգաբանութիւնը: Ակկաթի Սար-
զոն թագաւորի ժամանակ (2800 Բ. Ա.) Կանէշ եղած

Խաթթիականն էր: Այս լեզուի անուանա-
կոչումն ստուգուած է 12 հատուածների
մէջ ուր աղօթողների բերնին մէջ կրուած
է հետեւեալ խօսքը. Աղօթողը «Har-li-li»
(Խարրիական) լեզուով ըսաւ իր աղօթքը:

Կանէշեան բնագրերի մէջ ցիրուցան
Խարրիներէնով գրուած են ոչ միայն եր-
գումներ և սոսկական հայցուածքներ առ
աստուածներ, այլ և այդ լեզուով առան-
ձին տախտակների վրայ արձանագրուած
են ամբողջ դիւցազներգութիւններ և զը-
րոյցներ, ինչպէս Գիւրամիշի երգը¹, Աբ-
բուշ-զրոյցը և Kešše - երգը: Այս վեր-
ջինը կը գրաւէ առ նուազն 14 աղիւս,
մօտ 3500 տող:

Նախա-Խաթթիներէնով գրուած են ամէն
տեսակ աղիւսներ և աստուածների վերա-
բերող աւանդավէպեր (Götterlegenden):
Անոնց նուիրուած են երգեր:

Այս աղիւսները կը թուին լինել երկ-
լեզուեան: Այս լեզուի առանձնայատուկ
յօրինուածքի հետեւանքով դեռ հնարաւոր
եղած չէ անոր լուծումը: Պորրէր կը կարծէ
որ նոյնիսկ ժե. դարուն Բ. Ա. Խաթթի
զրագէտներ չէին հասկնար այդ Նախա-
Խաթթիներէնը: Նա կը տարբերի Բողազ-
Քէօյի միւս լեզուներէն. անոր գրելու ձեւը
կը նոյնանայ Խաթթիներէնի հետ ձայնա-
ւորների նմանութեամբ. վերջնոյն Wa,
We, Wi, Wo, Wu ձայնաւորները նա-
խախաթթիներէնի մէջ կը դառնան Wa + A,
We - E և այլն. g և k տառերը կ'ար-
տայայտուին Ga և Ka նշանագրերով,
ինչպէս նաեւ d և t, Da և Ta նշանա-
գրերով: Առանձնայատուկ է Ba նշանը
նով Pa նշանի երեւումն: Որ Նախա-

Խաթթիներէնը ունեցած պէտք է լինէր
շատ աւելի ձայներ քան գրութեանց մէջ
արտայայտութիւն գտած թիւը, պէտք է
մակարերել դէպքերէ⁵. օրինակ Labarna
- Լաբարնա, Խաթթի մեծ թագաւորի տիտ-
ղոսը, Բաբելական բնագրերի մէջ գրուած
է իրբեւ ta-ba-ar-na - դա-բա-ար-
նա: Իմ կարծիքով չափազանց հետա-
քըքրական է Պորրէրի հետագայ պատա-
հական հատուածը. «Խաթթի երկրի ներ-
սերը կը գտնուէր մի քաղաք Ku-ud-
bi-na-aš (Գու-ուդ-բի-նա-աշ), նաեւ
Gul-bi-na-aš (Գուլ-բի-նա-աշ) Մու-
ֆարդին-Նփրկերտի մարզին մէջ: Միւսնոյն
մարզին մէջ Պորրէր կը յիշէ Ku-ud-
mar (Գու-ուդ-մար) քաղաքը, ասորական
արձանագրութիւնների Kullimeri, Բիւ-
զանդական Xλαμαρων և մեր Գղմար, Հայկ.
Տիգրանակերտէն հիւսիս: Վերոյիշեալ ա-
նունների մէջ յիշուած կամ եղանակա-
ւորուած tl - դլ ձայնը ծագումով կը պատ-
կանի հիւսիսային կովկասեան լեզուներին:
Այդ ձայնը երեւան կու գայ նաեւ Աւար
լեզուի tladi - տիկին (թլատի) բառին
մէջ, իսկ Նախա-Հայկական խալտէական
բեւեռագրերի մէջ lutu - Լուդու - (տիկին)
ձեւով, Եւրամականի մէջ rutu ձեւով, իսկ
Լիկիական ladi ձեւով⁶: Խարրիներէն լե-
զուի սեպածեւ նշանները զործածուած են
շատ տարբեր ձեւերով. ոչ միայն բնա-
գրերը կը զանազանուին իրարմէ իրենց
նշաններով, այլ և միեւնոյն արձանագրու-
թեան մէջ նշանները կը փոխուին բառէ
բառ: Բազմաթիւ նշանագրեր և ամբողջ
հատուածներ դեռ կը մնան անընթեռնի:
Հրօզնի եւս համամիտ է որ Խաթթիերէնը

1. Հմտ. A. H. Sayce: The Hittite Version
of the epic of Gilgames. ի Journal of Royal
Asiatic Society. 1925. էջ 707-715.

2. Խաթթի և Խարրի զրագէտներն եւս կը թուին
տեւական շփոթութեան մէջ եղած լինել Պ և Բ շքը-
թնային և Կ և Գ հազգային տառերի նմանաձայնու-
թեան մասին, ինչպէս մեզմէ շատեր այսօր: Հաւանաբար
զարաւոր աւանդութեան մի արդիւնք. Ա. Ա.

3. E. Forrer. ZDMG. անդ. էջ 229.

4. Եթէ Պորրէր զիտար հայերէն, հաւանաբար նա

այդ պիտի նոյնացնէր մեր քաղաք բառին հետ: Ա. Ա.

5. Այս Գուլբինաշ տեղանունը անվիճելիօրէն պէտք
է նոյնացնել Սասունի Ուլը-Կուլը գաւառին հետ, Դա-
ւորիկէն հարաւ-արեւելք, դէպ ի Մաֆարիկին. Ա. Ա.

6. Պորրէրի այս ստուգումներէն զերաւ կարելի է
եզրակացնել որ Անգլիացիները իրենց lady - (ազնե-
ւական տիկին) բառը զողջած են մեր Նախահայրերէն
և զրացիներէն: Այդ արմատին կ'ածանցուի նաեւ Տոռ-
տոռ բառը, այժմ զործածական ամբողջ Առաջաւոր Ա-
սիոյ մէջ:

Մետակի լեզուն կը զանազանուի որպէս զանազաբարբառ: Նա ունէր մի առանձնա-
յատկութիւն որով քաղաքների աստուած-
ները կը կոչուէին պատկանեալ քաղաքի
սեռական հոլովով. — die (Gött) er
Hattini = խաթթի (Աժ)ները. կամ
... էր երկրին կամ քաղաքին = (die
Gött)er des Landes (und?, oder?)
von asdu¹.

Իրրեւ մի նմոյշ խաթթիերէնի՝ յառաջ
կը բերեմ ֆորրէրի յիշած (էջ 227) մէկ
ասութիւնը. — (ur/ū) Ha-ad-tu-uh-e
e-Wee-ir-re = խաթթի (էն?) ա-
նոնք, իշխաններ. այսինքն խաթթի իշ-
խանները: խաթթի արտայայտութեան
խաթթիական ձեւն է — ha-ad-tu =
+ hatto: խաթթիական այս ձեւին մէջ
խա-ադ-դու + խաթթօ անուանումը շատ
կը մօտենայ մեր պատմական ցեղանու-
նին = հայ-խայ²:

Հետագայ զուգններին, պատմական
դէպքեր և յարաբերութիւններ ընդգծելու
ժամանակ, դեռ առիթ կը լինի վերագառ-
նալու Նախա-խաթթի և խաթթի, ինչպէս
նաեւ Բալայական, Լուվիական և Մանդա
լեզուներին: Իմ ներկայ նպատակին հա-
մար էական նշանակութիւն ունի խաթ-
թիերէն և Նախա-խաթթի լեզուների ըս-
տոյզ փոխ-յարաբերութիւնը և ձեւախո-
սական կապակցութիւնները: Դիւրին է
ըմբռնել թէ ֆորրէրի գործածած Նախա-
խաթթի ասութիւնը կը նշանակէ որ այդ

լեզուն կը խօսուէր բնիկներէ՝ Հնդ-Եւրո-
պացի խաթթի ժողովրդի խաթթուշաշ -
Բողազ-Քէօյ գալէն առաջ, և եթէ խաթ-
թիերէնը միմիայն անոր մէկ «գաւառա-
բարբառն» էր, ուրեմն կարելի է հետեւ-
ցնել որ Նախա-խաթթի լեզուն եւս
Հնդ-Եւրոպական ազդեցութիւններ կրելէ
առաջ հիմնապէս յար և նման էր խաթ-
թիերէնին, այսինքն թէ գոնէ Ալիսէն մին-
չեւ Երասխ և Միտաննի Նոր-Քարային
այդ «Արմենոյիտ - խաթթի» ժողովուրդը
կամ ցեղը կը խօսէր խաթթիերէն, թէ
Հնդ-Եւրոպացի արշաւողներ էին ինքզինք-
նին խաթթի կոչող տարրը: Նախ Գուշա-
րայի և ապա խաթթուշաշի մէջ «կայսրու-
թիւննիս հիմնելու ժամանակ, երկրի բնիկ
տարրը արդէն ունէր ընկերային և պե-
տական կազմակերպութիւն, ունէր իր ազ-
գային աստուածները, բաց ի իւրաքանչիւր
քաղաքի տեղական աստուածներէն, որ
այդ ժողովրդի քուրմերը յօրինած էին
երգեր, աղօթքներ և ոգեկոչումներ ուղ-
ղեալ իրենց աստուածներին. թէ անոնք
ունէին մի սեփական լեզու որով կ'ար-
ձանագրէին թէ իրենց աղօթքներն և թէ
իրենց ծիսակատարութիւններն ու կրօնա-
կան կարգերը: Աստուածպետական - քա-
ղաքական զարգացման այդ աստիճանին
հասած մի ժողովուրդ կ'ենթադրէ զարա-
ւոր գոյութիւն և ինքնուրոյն մշակութա-
յին կեանք. ապացոյց մեր հեթանոսական
մեհեանների հանդէպ մեր ազգի ցոյց տը-

Իր Թարգմանութեան վերոգրեալ ձեւէն կը թուի որ ինքն
ալ վստահ չէ այդ մասին: Այս ուսումնասիրութեան ըն-
թացքին անկարելի է տալ աւելի մանրամասնութիւններ
աւելի որոշապէս պարզել յարուցուած հարցերը: Ա. Ս.

2. Աւելի պարզ և ժողովրդական դարձնելու համար
այս ուսումնասիրութիւնը եւս զանց կ'առնեմ որոշ բեթ-
նիքական ցուցմունքներ, ինչպէս այս հատուածը պարու-
նակող բեռնագրական աղիւսը որ կը կրէ BO. 2359. 1. 28
թուահամարը: Հայ ընթերցողին համար այդ չունի ոեւէ
կարեւորութիւն, Բողազ-Քէօյի դիւանի 11.000է աւելի
տախտակներն ու բեկորները բաժանուած են Պոլսոյ
Թիւրք Թանգարանի և Բերլինի Միզէոնին միջեւ: Վե-
րոգրեալ BO. կը նշանակէ որ այդ աղիւսը կը գտնուի
Բերլին, իսկ KBO. կրող բեռնագրերը՝ Ի Պոլսոյ Ա. Ս.

1. Սա ինձ կը յիշեցնէ իմ մեծ-մօրս խօսակցութեան
ձեւերը. նա մի անգէտ աստուածավախ Տիկին էր, բուն
տիպը մեր անցեալ սերունդներին: Նա Աստուած բառը
հազիւ թէ բերան կ'առնէր: Մինչեւ այսօր եւս կը զգամ
այդ վաղեմի աւանդական մթնոլորտը՝ բնագղարար, ա-
ռանց արտայայտել կարենալու զրչով կամ խօսքով: Սա
հիմնական խնդիր է՝ կարօտ ուսումնասիրութեան: Հա-
յաստանի մէջ դեռ կան հին նմոյշներ անցեալ սերունդ-
ներէն: Ֆորրէր մի ծանօթութեամբ (էջ 226) asdu -
աշու. բառի մասին կը գրէ որ այդ մեզ կը յիշեցնէ
յունական αἶστος = քաղաք: Ինձ կը թուի որ գերմա-
նացի գիտնականը կը սխալի այստեղ. հաւանաբար asdu
կարծառեալ ձեւն է մեր Աստուած բառին, ինչպէս մեր
դասական Աժ. ձեւը: Բացի անտի կայ ձայնային մի
եզական հանգիստութիւն երկու բառերի միջև. Աշու-Աժ.

ւած խորին պաշտամունքը, և այժմ էլ
մեր ժողովուրդի անխորտակելի սէրն ու
նուիրումը առ իր եկեղեցին և կրօնական
զանձերը:

Կրօնը, ու է տեսակի կրօնը ժողո-
վրդական զանգուածների համար, հա-
մայնակուլ և համայնաթափանց մի ազ-
դակ եղած է պատմութեան արշալոյսէն
ի վեր: Մեր ներկայ սերունդը դժուարու-
թեամբ կ'ըմբռնէ կրօնի նշանակութիւնն
ու դերը մեր անցեալ սերունդների կեան-
քին մէջ: Մեր ամբողջ դասական գրա-
կանութիւնը ունի գերազանցապէս կրօնա-
կան դրոշմ:

Արդ բանաւոր է հանել մի համոզիչ
եզրակացութիւն վերեւ յառաջ բերուած
մարդարանակաւ ու լեզուաբանական որոշ
տեղեկութիւններէն. որ պատմականօրէն և
լեզուաբանօրէն խաթթի կամ խաթթի հա-
ւաքական խայր անուն կրող ազգաբնա-
կութիւնը կը համապատասխանէ Ֆօն Լու-
շանի «Արմենոյիտ» մարդարանական տի-
պին, որ նա կը գրուէր այլ. կը գրուէր
Հայկական Բարձրաւանդակը և հաւանա-

բար դրացի երկիրները Նոր-Քարային
դարաշրջանի սկզբին, թէ այդ խաթթի
ժողովուրդն էր Հէրցֆելտի մասնանշած
մշակոյթի ստեղծողը, թէ հաւանաբար
4000 տարի Ք. Ա. այդպիսի յառաջացած
մի մշակոյթ ունեցող ժողովուրդ չէր կա-
րող չունենալ իր գրաւոր պատմութիւնը,
իր արքայական դիւանը, զոր ինչպէս
խաթթիական հսկայական դիւանը մինչեւ
1906 - 1907, թաղուած կը մնայ մեր
պատմական բնավայրի մի անկիւնը:

Եթէ 1400 - ին Ք. Ա. խաթթիերէնով
բեռնագրեր կ'արձանագրուէին Բողազ-
Քէօյի մէջ, այդ կը նշանակէ որ խաթթ-
րիներ գիտէին գրելու արուեստը, և ու-
րեմն բուն իրենց մայրաքաղաքի մէջ (ա-
նոր տեղը դեռ բոլորովին անձանթ) կը
պահէին իրենց դիւանը: Պէտք է մի նոր
Հիւկոյ Վինկլըր յայտնագործելու այդ
հրաշքը:

Այժմ պէտք է դիմել պատմական ար-
ձանագրութեանց՝ աւելի եւս լուսաբանե-
լու վերեւի հայեացքը:

(Շար.)

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅ ԴՐՈՇՆԵՐԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

գրեց

Հ. ՎԱՐԳԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

Բ. Տպագր.

Գին՝ 1.50 Զուից. Ֆր.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԶԵՆՈՒԴՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

գրեց

Հ. ՎԱՐԳԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

Գին՝ 2 Զուից. Ֆր.

ԵԶՈՎԲՈՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Ճիւսացուած ուսանաւոր իմաստներով եւ բարոյական խրատներով

Զ. Տպագրութիւն — Գին՝ 3 Զուից. Ֆր.